## ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Պատճէն

Ի 27 յունուարի 1917 Թ. ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ ԻՆՔՆԱԿԱԼԻ հրամանով Ս. Էջմիածնի Սինոդում լսեցին զեկուցում. Սինոդը Գանձակի փոխանորդի յայտարարութեան համաձայն քննութեան առնելով պսակուողների տարիքի տարբերութեան չափը և այդ առթիւ չգտնելով ցուցում Հայոց եկեղեցական և ռուսաց պետական օրէնքներում, սակայն և ցանկալի համարելով, որ այդ տարբերութիւնը լինի 15 տարուց ոչ աւելի՝ անցած տարուայ սեպտ. 14-ի № 1499 յայտարարութեամբ խնդրել էր Վեհափառ Կաթուղիկոսի բարեհաճ տնօրէնութիւնը այս մասին, միևնոյն ժամանակ ցանկալի համարելով, որ քանի որ խնդիրը կրում է հանրային բնոյթ՝ քննուի խնդիրը նախապէս հասարականօրէն։ Արդ՝ Վեհափառ Կաթուղիկոսը յունուարի 18-ի № 100 մակագրութեամբ հրահանգել է Սինոդին պսակուողների տարիքի տարբերութիւնը ի նկատի ունենալ մինչև 15 տարի և այս մասին հրահանգել թեմական Առաջնորդներին, սակայն վերապահութեամբ, որ աւելի տարբերութեամբ և կամ այդ շրջանում եղած տարակոյսների նկատմամբ Առաջնորդները ամեն անգամ դիմեն Սինոդի վերջնական որոշման և արտօնութեան։ ՀՐԱՄԱՅԵՑԻՆ. Վեհափառ Կաթուղիկոսի հրամանի համաձայն պատուիրել թեմական Առաջնորդներին շրջաբերականով յայտնել Հոգևոր Կառավարութիւններին, գործակալներին և բոլոր քահանաներին, որ պսակուողների տարիքի տարբերութիւնը պէտք է լինի ոչ աւել քան տասն և հինգ տարի, իսկ աւելի տարբերութեան կամ այդ շրջանում եղած տարակուսանքների նկատմամբ ամեն անգամ պէտք է դիմում լինի Առաջնորդին, որ իւր հերթին խնդրելու է Սինոդի տնօրէնութիւնը։ Այս օրագրի պատճէնը ուղարկել «Արարատ» ամսագրի խմբագրին՝ տպագրելու առաջիկայ համարում։

Իսկականը ստորագրել են. Նախագահ Սինօդի Գէորգ Ե. Կաթողիկոս ամենայն Հայոց. Անդամներ՝ Յուսիկ արքեպիսկոպոս, Սահակ վարդապետ, Տիրայր Ծ. վարդապետ, Կ. պ. Ատենադպրի Ա. Խոնդկարեան. արձակել է 1917 թ. յունուարի 27-ին Սինօդի պրոկուրոր Փ. Մելիք-Օհանջանեան. Համեմատ է բնագրին. գործավար Ց. Մուշեղեան։

Սինօդը՝ լսելով Զանգուի առուի Յանձնաժողովի Նախագահի յունուարի 23-ի, թ. 277, յայտարարութիւնն, որոշեց. պատուիրել Ս. Աթոռի Գանձապահին բանալ Զանգուի առուի Յանձնաժողովի անունով վարկ և 5000 ռուբլու։ 4 յունվ., թ. 6։

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան 1916 թ. դեկտ. 31-ի, թ. 3012, մակագրութիւնն, որոշեց. համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան պատուիրել Ս. Աթոռի Գանձապահին տալ Ճեմարանի Վարչութեան $19^{16}/_{17}$ ուս. տ. ծախքերի համար 20000 ռուբլի։ 11 յունվ., թ. 8։

Սինօդը՝ լսելով Ղարաբաղի թեմի ժամ. կառավարչի 1916 թ. յունիսի 17-ի, թ. 546, յայտարարութիւնն Կոնսիստորիայի նախկին Գանձապահ Յարութիւն ա. քահ. Վարդապետեանին 1910—16 թ. թ. համար 759 ռ. դիւանական ծախք վճարելու առթիւ, որոշեց. հաստատել Ղարաբաղի Կոնսիստորիայի 1916 թ. մայիսի 31-ի որոշումը, որի համաձայն տրուած է Գանձապահ Յարութիւն ա. քահ. Վարդապետեանին 1910-16 թ. համար իբրև դիւանական ծախք յաւելեալ 759 ռուբլի։ Նկատել Կոնսիստորիային գործակալի հաշիւներն ամեն տարի իւր ժամանակին չըստուգելու և նորան յետին թւով յաւելեալ վարձատրութիւն տալու համար, իսկ անդամներ Մեսրոպ Ալբիեան և Կարապետ Վարդապետեան քահանաներին նկատել իրենց կայացրած որոշումն այժմ անկանոն ճանաչելու համար։ 16 յունվ., թ. 10։